Եաղուպին եղբայրն որ իբրու երկու ամիս էր, որ ի քննութեան և ի տանջանս էր, յաւուրս յայսոսիկ թող տուեալ, բայց խելացնորեալ է ասեն, թէ ի թէքիրտաղ տարին, և ոմանք թէ ի յաքսորս ուղարկեցին։ Ցիզմիրու ահագին սահակ վ. եկն աստ։ Ի Պռուսայու աքսորեալքն յակոբ աղան և հաճի պետրոսն յաւուրս յայսոսիկ իթլախ եղեալ ասեն։...

Ցամի տեառն 1752.ին
ի սեպտեմբերի 17–ին չուէ առ վէնայով
[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Միքայէլ Վ.

ՃԿԵ.

Պաշքալովի մէջ Մխիթարեան նախկին առաքելութեան մը բացման նախապատրաստական գործողութիւնները կը պատմուին հետևեալ նամակին մէջ։

Օր. Եղ. Ցս. Քս.

Ապրիլի 12 Պէլիկրատն 1753?

Գերայ Պատուվելի Հայր Աբրայիմ իմոյ հոգևոր և մարմնաւոր Բադրոնիս Մեծաւ խոնարհութեամբ ողջուն

Եւ ընդ սակաւ ողջունիս յայտ լիցի Գերայ Պատուվելութեանտ վասն զի Գերհարգելի Վարդապետն և հայր ղազարն եղին ի Պէլիկրատն որպէս գրեալ էյի, և ի միասին գնացիլ ինք Գերայ Պայծար Եպիսկոպոսին մօտ, տանելով ևս զգիր մի, զոր գրեալ էր քաղաքն հասարակ Գերայ Պայծար Եպիսկոպոսին և կարդաց, զորին պատասխանեաց այսպէս. Իմացայ զքնդիրքն ձեր հրամանուցը, Քաղաքացոցն նայև որպէս հոս տեսանեմ որ էկիլ իք հայ հասարակութեան կամաւն, և ոչ միայն ի կողմանէ աշխարհականաց, այլ և քահանայից. և կու գովեմ որ ջանք կանէք այպիսի բարի բանի, ահայ ես ալ Գոնֆերմավադ կու անեմ և կու հաստատեմ և կու շընաֆօրեմ և կու օրհնեմ, զի աւելցի այս սուրբ կրօնը. մեծաւ սիրով ընդունեց. նայև ասաց թէյ, զատկին էտև Վիզիդացիա պի գայ ան տեղն և այլն. չատ կալաճի արինք. աւելի քան մէկ սհադ. գրով ոչ կարեմ գրել, քանզի չատ պի լինէր, թէ ինչ խօսակցութիւն եղիլ էյ. բայց մասնաւոր քիչմ բան պի գրեմ. այսինքն վասն ըշգօլանու սէպլն հրրամայեց որ տարտ ունէնան որ ըզտղաքն սօրվէցնուն, որովհետև ունի պարտականութիւն այս կրօնը տըղաք սօրվէցնելու։ Ետ այսորիկ մեր տէր օվանէսը բէրեալ էր ըզգիր մի ներողութեան Գարմիլիդանուն գոնկրէկացիային, որ հաստատէյ մեր քաղաքն, և այսպէս ներողութեան գրբեանքն հարկ էյ նախ տանել առ Գերայ Պայծար եպիսկոպոսն, որ գոնֆերմօվադ անէյ. և ետ այնորիկ կու ըսգրսին ըզգոնկրէկացիան հաստատելու անոր սէպլն. խրրկիլ էր տէր օհանէսն ըզնոյն գիրն առ եպիսկոպոսն, որ հաստատէյ, զորն տվաւ վարդապետն եպիսկոպոսին. կարդաց և վար դրբաւ օսդօլին վրայ ըզնոյն գիրն և այսպէս ասաց թէյ այս ոչ լինի, քանզի ոչ գոյ ի դրբանզիլվանիայ նոյն կարգն, վասն որոյ ոչ կամիմ տալ թողութիւն. այլ ահայ ունիք այժմն կրօնաւորաք, և եթէ կամիք հաստատելու Գոնկրէկացիայ նայ թողութիւն կուտամ, և ասաց հայր ղազարին թէյ, եթէ կամիք կըլաք բէրելու և հաստատիք գոնկրէկացք և ալլաւ պի լինի հայ ազգին, և այսու անդ մնաց նոյն գիրն, տէր օվանէսին. դարձեալ ասաց ևս թէյ հարկաւոր էյ ևս ի կերլայ ալ մըտանել սոյն կրօնիս. եթէ հընար է քանի չատ, քանզի կու ճանաչեմ որ բարի պի լինի, մանաւանդ որ տըղաքն պի սօրվին քրիստոնէական վարդապետութիւնն և այլ բարի բաներ ալ. ասոր վրայ ասի ես թէյ թագաւոր Աստուծոյ ողորմութեամբն ունին հօն ալ. միայն քիչ մըն ժամանակի էտև պի լինի. ասաց թէյ լաւ էյ.